**Արձանագրություն N 2**
**Ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

Սկիզբ՝ «16» ապրիլ 2026թ.
Ավարտ՝ «30» ապրիլ 2026թ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **բոլոր** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված (առցանց եղանակով):

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ֆելիքս Միրզոևը, իսկ քարտուղարն էր՝ Մարի Մովսիսյանը:

**ՕՐԱԿԱՐԳ**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին**
2. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին**
3. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին**
4. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից/ներ/ որոշելու մասին**
5. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին**

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին**

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են **2026 թվականի ապրիլի 16-ին, ժամը 16:00-ին էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով**:
- Հայտերի վերաբերյալ պաշտոնական հարցումներ և պատասխաններ չեն եղել:
- Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:
- Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

| Մասնակիցների անվանումները | Հասցե, էլ.փոստ |
|---|---|
| **«Գրիգիգ» ՍՊԸ** | Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14<br>gritig@inbox.ru |
| **«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ** | Երևան, Զաքարիա Քանաքեռցու փող., 50շ.<br>info@grandinspection.am |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին**

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Մասնակցի կողմից ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

- Մասնակցի կողմից ներկայացված փաթեթները չեն ներառում հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- Մասնակցի կողմից ներկայացված փաթեթներում ներառված փաստաթղթերը կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Մասնակիցների հայտերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

**«Գրիգիգ» ՍՊԸ**

- Հայտում բացակայում է հրավերով պահանջվող «մասնագիտական փորձառություն», <<Ֆինանսական միջոցներ>>, «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին համապատասխանության հավաստումը:
- Հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիաների ներդիրները և հավաստագրերը:
- Հայտով ներկայացված չէ հրավերով պահանջվող Հավելված 1.1, Հավելված 1.2, Հավելված 1.3:

**«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ**

- Հայտում բացակայում է <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին համապատասխանության հավաստումը, այն է.

| N | Ֆինանսական միջոցներին ներկայացվող պայմանները | Պահանջվող փաստաթղթերը և դրանց ներկայացվող պայմանները |
|---|---|---|
| 1 | Մասնակցի բանկային հաշվում /հաշիվներում/ ֆինանսական միջոցների առկայություն՝ ոչ պակաս նախատեսված ֆինանսական միջոցների 30 տոկոսից | Տեղեկանք մասնակցի բանկային հաշվի/հաշիվների/ մնացորդի վերաբերյալ կամ քաղվածք բանկային հաշվից /հաշիվներից/ հայտը ներկայացնելու կամ դրան նախորդող օրվա դրությամբ |

Հանձնաժողովը որոշեց՝

1. Կասեցնել նիստը 1 աշխատանքային օրով, ծանուցել **մասնակիցներին** անհամապատասխանության մասին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.2 Նիստը շարունակվում է ապրիլի 30-ին ժամը 12:00-ին:

Հանձնաժողովը արձանագրեց, որ **մասնակիցների** կողմից շտկվել են անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. **<u>ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1</u> ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

**Չափաբաժին 1**

| ***Նախահաշվային արժեք*** | | ***675,000.00 ՀՀ դրամ*** | | ***ՀՀ դրամ*** |
|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Մասնակիցներ** | **Արժեք** | **ԱԱՀ** | **Ընդամենը** |
| 1 | **«Գրիգիգ» ՍՊԸ** | **400 000** | **0** | **400 000** |
| 2 | **«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ** | **650 000** | **0** | **650 000** |

Չափաբաժին 2

| Նախահաշվային արժեք | | 310,000.00 ՀՀ դրամ | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| Հ/հ | Մասնակիցներ | Արժեք | ԱԱՀ | Ընդամենը |
| 1 | «Գրիգիգ» ՍՊԸ | 300 000 | 0 | 300 000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. **Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից/ներ/ որոշելու մասին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի

Որոշվեց՝

**ԱՐՋՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին չափաբաժին 1-ի և չափաբաժին 2-ի մասով՝ **«Գրիգիգ» ՍՊԸ-ին:**

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. **ԱՐՋՆԻՀ-ԳՀԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին**

Համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին մասը՝

Որոշվեց՝

1. Անգործության ժամկետ սահմանվում 10 օրացուցային օր:
2. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը՝ հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆելիքս Միրզոև

Հանձնաժողովի անդամներ՝

Էդիկ Աֆյան

Նելլի Վենիամինովա

Կլարա Իսակովա

Տոմա Իվանովա

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարի Մովսիսյան